«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 87/6

07-ը մարտի 2026 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2019թ. ապրիլի 27-ի թիվ 37 նիստում հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում» փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով ԵՊՀ գիտական խորհրդի 2025թ. դեկտեմբերի 18-ի նիստի որոշումը՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից 2019թ. ապրիլի 27-ին հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում» (այսուհետ՝ ընթացակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) **Ընթացակարգի 1-ին** կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«1.Սույն ընթացակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) համամասնաճյուղային կամ կառուցվածքային ստորաբաժանման (ֆակուլտետ կամ այլ ստորաբաժանում) կազմում գործող ամբիոնի վարիչի (այսուհետ՝ ամբիոնի վարիչ) թափուր պաշտոնի համալրման կարգն ու պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները։»

2) **Ընթացակարգի 2-րդ** կետը հանել:

3) **Ընթացակարգի 3-րդ** կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ամբիոնի վարիչն ընտրվում է սույն ընթացակարգով սահմանված կարգով, բաց մրցույթի հիման վրա՝ հինգ տարի ժամկետով:

Նույն անձն իրավունք ունի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում՝ կառուցվածքային փոփոխության դեպքում:

Ամբիոնի վարիչ չի կարող ընտրվել կամ սույն ընթացակարգի 40-րդ կետով սահմանված կարգով ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար չի կարող նշանակվել այն անձը, որի 65 տարին լրացել է:

Ընտրված ամբիոնի վարիչի լիազորությունները դադարեցվում են տնօրենի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին:»

4) **Ընթացակարգի 6-րդ** կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«5.Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է ակադեմիական աշխատանք:»

5) **Ընթացակարգի 9-րդ** կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«8. Ամբիոնի վարիչ կարող է ընտրվել այն անձը, որն ունի.

1) ամբիոնի ուղղվածությանը համապատասխան կամ հարակից մասնագիտությամբ գիտական աստիճան,

2) առնվազն հինգ տարվա ակադեմիական աշխատանքի ստաժ,

3) վերջին հինգ տարիների ընթացքում ունի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված առնվազն երկու գիտական աշխատանք (հոդված) և բացի դրանից՝ ունի նաև սույն ենթակետով սահմանված կարգով հաշվարկված գիտահետազոտական ու ուսումնամեթոդական գործունեության առնվազն վեց միավոր,

Գիտահետազոտական ու ուսումնամեթոդական աշխատանքների տեսակներն ու պայմանները	Միավորը՝ յուրաքանչյուրի հաշվարկով
Դասագիրք Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Մենագրություն Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Ուսումնական ձեռնարկ Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 5.5 տպագրական մամուլ:	3
Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված աշխատանք (հոդված):	2
Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» ընդգրկված պարբերականներում տպագրված գիտական աշխատանք (հոդված):	1

Բացառություն են կազմում.

ա) արվեստի բնագավառի ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդները, որոնք պետք է ունենան առնվազն 7 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, վերջին 5 տարում մասնակցած լինեն առնվազն 3 հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների և ունենան առնվազն մեկ հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:

բ) Արտակարգ իրավիճակների և սպորտի բնագավառի ամբիոնի վարիչի հավակնորդները պետք է ունենան գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 7 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում բուհում իրականացրած լինեն մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և (կամ) ունենան ՀՀ և այլ երկրների պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ են, ունենան հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:»

6) **Ընթացակարգի 10-րդ** կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«9. Ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցները, մրցույթի վերաբերյալ հայտարարության

օրվանից՝ մեկամսյա ժամկետում ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարին ներկայացնում են դիմում՝ տնօրենի անունով, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) և գիտական աստիճանի դիպլոմի պատճենները, հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը, որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականը (առկայության դեպքում), մասնագիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր, թեկնածուի ծրագիրը ամբիոնի զարգացման վերաբերյալ:»

7) **Ընթացակարգի 11-րդ** կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«10. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթի նախապատրաստման և կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ԵՊՀ ԻՄ-ում գործում է մշտական մարմին՝ որակավորման մանդատային հանձնաժողով, որի անվանական կազմը հաստատվում է տնօրենի հրամանով:»

8) 40-րդ կետում «9-րդ կետում» արտահայտությունը փոխել «8-րդ կետում» արտահայտությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2019թ. ապրիլի 27-ի թիվ 37 նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____Ա.Վ. Ցուցուլյան

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

(87/6 որոշմամբ փոփոխվել են 1, 3, 6, 9,10, 11, 40 կետերը, 2 կետը հանվել է)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) համամասնաճյուղային կամ կառուցվածքային ստորաբաժանման (ֆակուլտետ կամ այլ ստորաբաժանում) կազմում գործող ամբիոնի վարիչի (այսուհետ՝ ամբիոնի վարիչ) թափուր պաշտոնի համալրման կարգն ու պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները:
2. Ամբիոնի վարիչն ընտրվում է սույն ընթացակարգով սահմանված կարգով, բաց մրցույթի հիման վրա՝ հինգ տարի ժամկետով:

   Նույն անձն իրավունք ունի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում՝ կառուցվածքային փոփոխության դեպքում:

   Ամբիոնի վարիչ չի կարող ընտրվել կամ սույն ընթացակարգի 40-րդ կետով սահմանված կարգով ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար չի կարող նշանակվել այն անձը, որի 65 տարին լրացել է:

Ընտրված ամբիոնի վարիչի լիազորությունները դադարեցվում են տնօրենի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին։

3. Ֆակուլտետային ամբիոնի վարիչն ընտրվում է ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում: Ֆակուլտետային ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետի գիտական խորհրդի ընդունած որոշումը հաստատվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ:
4. Համամասնաճյուղային ամբիոնի վարիչն ընտրվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում:
5. Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է ակադեմիական աշխատանք:

II. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

6. Ամբիոնի վարիչի պաշտոնն ընտրովի է և պաշտոնի տեղակալումն իրականացվում է բաց մրցութային ընտրության միջոցով:
7. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է ԵՊՀ ԻՄ ինտերնետային կայքէջում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումի ներկայացման վերջնաժամկետը:
8. Ամբիոնի վարիչ կարող է ընտրվել այն անձը, որն ունի.
   1) ամբիոնի ուղղվածությանը համապատասխան կամ հարակից մասնագիտությամբ գիտական աստիճան,
   2) առնվազն հինգ տարվա ակադեմիական աշխատանքի ստաժ,
   3) վերջին հինգ տարիների ընթացքում ունի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված առնվազն երկու գիտական աշխատանք (հոդված) և բացի դրանից՝ ունի նաև սույն ենթակետով սահմանված կարգով հաշվարկված գիտահետազոտական ու ուսումնամեթոդական գործունեության առնվազն վեց միավոր,

Գիտահետազոտական ու ուսումնամեթոդական աշխատանքների տեսակներն ու պայմանները	**Միավորը՝ յուրաքանչյուրի հաշվարկով**
Դասագիրք Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Մենագրություն Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 7.5 տպագրական մամուլ:	6
Ուսումնական ձեռնարկ Յուրաքանչյուր հեղինակի աշխատանքի ծավալը պետք է կազմի առնվազն 5.5 տպագրական մամուլ:	3
Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) հրապարակված աշխատանք (հոդված):	2
Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» ընդգրկված պարբերականներում տպագրված գիտական աշխատանք (հոդված):	1

Բացառություն են կազմում.

ա)արվեստի բնագավառի ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդները, որոնք պետք է ունենան առնվազն 7 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, վերջին 5 տարում մասնակցած լինեն առնվազն 3 հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների և ունենան առնվազն մեկ հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:

բ)արտակարգ իրավիճակների և սպորտի բնագավառի ամբիոնի վարիչի հավակնորդները պետք է ունենան գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 7 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում բուհում իրականացրած լինեն մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական

գործունեություն և (կամ) ունենան ՀՀ և այլ երկրների պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ են, ունենան հրատարակված գիտական (գիտամեթոդական) կամ ուսումնամեթոդական աշխատանք:

9. Ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցները, մրցույթի վերաբերյալ հայտարարության օրվանից՝ մեկամսյա ժամկետում ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարին ներկայացնում են դիմում՝ տնօրենի անունով, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) և գիտական աստիճանի դիպլոմի պատճենները, հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը, որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականը (առկայության դեպքում), մասնագիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր, թեկնածուի ծրագիրը ամբիոնի զարգացման վերաբերյալ:
10. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթի նախապատրաստման և կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ԵՊՀ ԻՄ-ում գործում է մշտական մարմին՝ որակավորման մանդատային հանձնաժողով, որի անվանական կազմը հաստատվում է տնօրենի հրամանով:
11. Մրցույթի մասնակիցների փաստաթղթերը որակավորման մանդատային հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են և հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացվում են տնօրենին:
12. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթի համար ներկայացված դիմումը մանդատային հանձնաժողովի կողմից ենթակա է մերժման, եթե հավակնորդի տվյալները չեն բավարարում մրցույթի պայմաններին, կամ չի պահպանվել դիմումի ներկայացման ժամկետը:
13. Տնօրենի կողմից մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած հավակնորդների գործերն ուղարկվում են ֆակուլտետի դեկանին (համամասնաճյուղային ամբիոնների դեպքում՝ փոխտնօրենին կամ

ուսումնամեթոդական վարչության պետին, որը 7-օրյա ժամկետում կազմակերպում է թեկնածությունների քննարկումը համապատասխան ամբիոնում և ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) մրցութային հանձնաժողով է ներկայացնում համապատասխան ամբիոնի կարծիքը: Կարծիքում նշվում է հավակնորդի մասնագիտական բնութագիրն ու մանկավարժական գործունեության գնահատականը, ամբիոնի նիստի քվեարկության արդյունքները (փակ կամ բաց՝ ըստ ամբիոնի նիստի որոշման):

14. Ամբիոնի վարիչի պաշտոնի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքով ամբիոնը կարող է հիմնավորված առաջնություն տալ հավակնորդներից մեկին, որից հետո գործերը ներկայացվում են ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովին:

III. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

15. Ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովը թեկնածուների վերաբերյալ 7-օրյա ժամկետում կարծիք է ներկայացնում ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նախագահին, որից հետո նախագահը հրավիրում է գիտական խորհրդի նիստ, քննարկում է ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը և փակ, գաղտնի քվեարկությամբ ընդունում է որոշում:

16. Ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նիստի նախագահողն ըստ ազգանունների այբբենական հաջորդականության ներկայացնում է թեկնածուների ցուցակը:

17. Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկայացնում է թեկնածուների տվյալները, ամբիոնի և մրցութային հանձնաժողովի կարծիքները:

18. Ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նիստին ամբիոնի վարիչի թեկնածուի ներկայությունը, որպես կանոն պարտադիր է: Ամբիոնի վարիչի թեկնածուի բացակայության դեպքում խորհուրդը որոշում է կայացնում թեկնածությունը քննարկելու կամ քննարկումից հանելու մասին:

19. Նախագահողը ծրագրային ելույթի համար, ըստ այբբենական հաջորդականության ձայնը տալիս է ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներին: Ելույթի տևողությունը սահմանում է ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհուրդը:
20. Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո, նախագահողի առաջարկությամբ, ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի առաջարկով, ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի որոշմամբ:
21. Թեկնածուների ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը, որին կարող են մասնակցել ինչպես ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի անդամները, այնպես էլ հրավիրվածները:
22. Քննարկման ժամանակ ելույթների տևողությունը սահմանում է ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհուրդը: Անհրաժեշտության դեպքում նախագահողը ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի համաձայնությամբ կարող է ավելացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը:
23. Թեկնածությունների քննարկումը դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ՝ ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի որոշմամբ:
24. Քննարկումների ավարտից հետո թեկնածուներին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն: Ելույթի տևողությունը սահմանում է ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհուրդը:

IV. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

25. Քննարկումներից և ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների անուն, ազգանունները գրանցվում են քվեաթերթիկում:
26. Նախագահողը ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ, գաղտնի քվեարկության կարգը:

27. Նախագահողի առաջարկով փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի որոշմամբ՝ ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի անդամներից ընտրվում է երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով: Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ:

Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է նշվի թեկնածուի ազգանունը, անունը, «կողմ» և «դեմ» բառերը (Հավելված 1): Մեկից ավելի թեկնածուների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով պետք է նշվեն թեկնածուների ազգանունը, անունը և վերջին տողում «բոլորին դեմ եմ» արտահայտությունը (Հավելված 2):

29. Հաշվիչ հանձնաժողովը ֆակուլտետի գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամի տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի անվանացանկում:

30. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրություն (Հավելված 3):

31. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

ա)թողնված է «կողմ» կամ «դեմ» բառը (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),

բ) քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ»-ի օգտին (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում): Որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ»-ի օգտին քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում:

Մնացած դեպքերում, ինչպես նաև քվեաթերթիկում չսահմանված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը, ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե քվեաթերթիկն անվավեր ճանաչելն ազդում է ընտրությունների արդյունքների վրա, ապա այդ հարցի կապակցությամբ հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը քննարկվում է գիտական խորհրդի կողմից և կայացվում է համապատասխան որոշում:

32. Ամբիոնի վարիչի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նիստին ներկա անդամների կեսից ավելին:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

33. Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակման արդյունքում ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ամբիոնի վարիչ ընտրվելու մասին,

բ) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

գ) ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,

դ) ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

34. Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի կողմից ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝

ա) առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները, կամ՝

բ) առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնքան ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ թեկնածուները, կամ՝

գ) հավասար առավելագույն ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

35. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակարգին համապատասխան:

Կրկնակի քվեարկության դեպքում ընտրված է համարվում ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին ստացած թեկնածուն:

36. Ամբիոնի վարիչի ընտրությունները համարվում է չկայացած, եթե՝

ա) ամբիոնի վարիչի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը,

բ)կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին:

37. Ամբիոնի վարիչի ընտրական գործընթացի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը խորհրդի նիստի արձանագրության հետ միասին ներկայացվում են տնօրենին:

Ամբիոնի վարիչի ընտրությունների գործընթացում Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, ԵՊՀ ԻՄ կանոնադրության, ԵՊՀ ԻՄ ներքին իրավական այլ ակտերի և սույն ընթացակարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում տնօրենը տասնօրյա ժամկետում ֆակուլտետի(ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդում նշանակում է կրկնակի քննարկում և քվեարկություն:

V. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

38. Տնօրենը համամասնաճյուղային (այլ կառուցվածքային ստորաբաժանման) ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Ֆակուլտետային ամբիոնի դեպքում տնօրենն ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետի գիտական խորհրդի ընդունած որոշումը ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում հաստատվելուց հետո:

    Ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված անձը հրավիրվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստին և խորհրդի անդամներն իրավունք ունեն նրան հարցեր տալու:

39. Ամբիոնի վարիչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում տնօրենը սահմանված կարգով նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ:

40. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայություն, ընտրության չկայացում կամ անվավեր ճանաչում, ինչպես նաև բացառիկ այլ դեպքերում) տնօրենն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն ընթացակարգի 8-րդ կետում սահմանված պահանջները բավարարող անձի և այդ ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի ընտրություններ:

Հավելված 1

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի _____ ֆակուլտետի գիտական խորհրդի _____ նիստում ամբիոնի վարիչի պաշտոնի փակ, գաղտնի քվեարկության

Հ/Հ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ

«Կողմ» կամ «դեմ» լինելու դեպքում քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

Հավելված 2

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի _____ ֆակուլտետի գիտական խորհրդի _____ նիստում ամբիոնի վարիչի պաշտոնի փակ, գաղտնի քվեարկության

Հ/Հ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆՇՈՒՄԸ
1.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
2.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
3.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
4.	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

Որևէ թեկնածուի «կողմ» լինելու կամ «բոլորին դեմ» լինելու դեպքում քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

Հավելված 3

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հաշվիչ հանձնաժողովի նիստի

ք. Իջևան « » 20 թ.

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի _____ ֆակուլտետի գիտական խորհրդի _____ նիստում հետևյալ կազմով՝

1. _____
2. _____
3. _____

Ֆակուլտետի գիտական խորհրդի _____ անդամներից ներկա էին _____ -ը:

Քվեարկվել է (են) _____ ֆակուլտետի _____ ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածությունը (ները):

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ ԿՈՂՄ, ԴԵՄ, ԱՆՎԱՎԵՐ,

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ ԿՈՂՄ, ԴԵՄ, ԱՆՎԱՎԵՐ,

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով _____ ընտրվել է (չի ընտրվել) _____ ֆակուլտետի _____ ամբիոնի վարիչի պաշտոնում:

Կամ՝

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ ֆակուլտետի _____ ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ամբիոնի վարիչի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1. _____
2. _____
3. _____

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ _____ _____

_____ _____